ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ

Հուլիսի 28-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների սրահում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների բացման արարողությունը: 13 երկրներից եկած 85 սփյուռքահայ ուսուցիչներ ՀՀ Կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանավորությամբ մեկ ամսվա ընթացքում Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հարկից ներս հետևեցին վերապատրաստման դասընթացներին, ծանոթացան ու այցելեցին Հայաստանի տարբեր ուխտատեղիներ և մշակութային հաստատություններ:

Հանդիսությունը բացեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Սրբազան Հայրն իր խոսքում հատկապես կարևորեց այն հանգամանքը, որ դասընթացներն անցկացվում են համայն հայության Սրբություն Սրբոցում՝ Ամենայն Հայոց Հայրապետի անմիջական հովանավորությամբ, ինչն էլ ավելի մեծ ոգևորություն պետք է հաղորդի ուսուցիչներին:

Այնուհետև ՀՀ Կրթության ազգային ինստիտուտի տնօրեն Վիկտոր Մարտիրոսյանը ներկայացրեց դասընթացների ծրագիրը: Բարիգալստյան խոսքով ներկաներին ողջունեց նաև ՀՀ Կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանը. «Երևի ձեզանից ոչ մեկը երբևէ չէր կարող երազել, որ մի օր որպես հայ ուսուցիչ կարող է ոչ միայն այցելել Մայր Աթոռ Ս. Էջմիածին, այլև ամբողջ մի ամիս վայելել միաբանության այս հյուրընկալ վերաբերմունքը և ստանալ անհրաժեշտ գիտելիքներ՝ հանուն հայապահպանության և մեր քրիստոնեական արմատների պահպանման»,- նշեց նախարարն իր խոսքում՝ հինգ տարիներ առաջ սկսված ծրագրի այս հանգրվանը նկատելով նոր սկիզբ:

Ողջույնի խոսք ասացին նաև ԱԺ Գիտության, կրթության և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրանուշ Հակոբյանը, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործադիր տնօրեն Նաիրա Մելքումյանը: ՀՀ վարչապետի անունից ներկաներին ողջունեց ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետ Արամ Կարապետյանը: Ապա ելույթ ունեցավ Հայաստանի Գրողների միության նախագահ Լևոն Անանյանը: Նա կարևորելով ուսուցիչների դերը հայապահպանության գործում՝ անդրադարձավ նաև դաստիարակչական խնդիրներին՝ շեշտելով և ուսուցիչների դերն ազգային նկարագրի կերտման և պահպանման գործում:

Ուսուցիչների անունից Վեհափառ Հայրապետին իրենց երախտագիտությունը և շնորհակալությունը հայտնեցին Աննա Սարիբեկյանը (Վրաստան) և Ալիս Բանոյանը (Հալեպ):

Հավարտ հանդիսության իր օրհնության խոսքը և հայրական սերը ներկաներին փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետը. «Տարին նվիրական է, մենք հիշատակեցինք 90-ամյակը Հայոց ցեղասպանության, որը եղավ այն հիմնական պատճառը, որ մենք դարձանք

աշխարհացրիվ ժողովուրդ: Հովվապետական այցելությամբ այս անցնող տարիներին եղել եմ գրեթե բոլոր գաղթօջախներում և գոհաբանական աղոթք եմ առ Աստված բարձրացրել, որ Տիրոջ օգնականությամբ մեր ժողովուրդը կարողացել է շտկել եղեռնահար իր մեջքը և այսօր ապրում է կազմակերպված ու հայաշունչ կյանքով: Հայոց Մեծ եղեռնի ոգեկոչումը առանձնակի նշանակություն ունի հատկապես հայ ուսուցչի համար: Այն ուխտի նորոգության գեղեցիկ մի առիթ է՝ իրականացնելու այն իղձերը, այն երազները, որոնք անկատար մնացին մեր հայրերի հոգիներում. պահել ու պահպանել մեր ժողովուրդը ամբողջ ու միասնական, հավատարիմ ազգային իր արժեքներին, մեր հայրերի սրբազան հավատքին:

...Խոսքս պիտի ավարտեմ՝ այս պահին հիշելով Խաչատուր Աբովյանի խոսքը, որպեսզի այն վերստին ու վերստին հնչի ձեր հոգիներում որպես պնդգամ և որպես ուղեցույց. «Ազգը պահողը լեզուն և հավատն է»: Այս նվիրական գործի մշակներն եք դուք, ազգը պահպանող նվիրական գործի մշակներն եք դուք, ուրեմն անաղարտ պահեք հայոց լեզուն՝ մեր մանկանց շուրթերին և ամուր՝ հայոց հավատքը նրանց հոգիներից ներս, որպեսզի հավերժորեն ապրի ազգս հայոց և վստահությամբ իր հայացքն ուղղած դեպի նոր ժամանակները մեր կյանքի՝ ապրի, արարի, շարունակի կերտել փառքը մեր ժողովրդի»,- մասնավորաբար նշեց նորին Սրբությունը:

Հանդիսությունն ավարտվեց «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողությամբ և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ» աղոթքով:

Դասընթացներն ավարտվեցին օգոստոսի 22-ին Վեհարանի հանդիսությունների սրահում կազմակերպված հրաժեշտի ցերեկույթով, որի ընթացքում ուսուցիչներին նախ դիմեց ՀՀ Գիտության և կրթության նախարար պրն Սերգո Երիցյանը՝ ասելով. «Դուք աշխարհի ամենաերջանիկ մարդկանցից եք, քանի որ շուրջ մեկ ամիս հյուրընկալվել եք Մայր Աթոռ Մ. Էջմիածնում: Դա երևի վիճակված չէ շատ-շատերին, այն վիճակվեց ձեզ, և դուք ձեր հոգում անթեղված կտանեք այն ամենը, ինչ կարող էիք տանել Մայր Աթոռից: Դուք տանում եք այն հոգածությունը, որ ձեր նկատմամբ դրսևորվեց այստեղ, դուք տանում եք մեր պատմական այս անդաստանի ոգին և էությունը, դուք տանում եք Վեհափառ Հայրապետի օրհնությունը, դուք տանում եք շատ ու շատ արժեքներ, որոնք հետո ձեզանից յուրաքանչյուրի համար էջ առ էջ կբացվեն, երբ որ դուք վերադառնաք մեր գաղթօջախներ, երբ որ դուք վերադառնաք ձեր ուսումնական հաստատությունները...»:

Նախարարն իր խոսքում անդրադարձավ նաև մի քանի նոր ծրագրերի, որոնք առաջիկայում իրագործվելու են Նորին Սրբության հովանավորությամբ: Ասվածը մասնավորապես վերաբերվում է Մայր Եկեղեցու հովանու ներքո ուսուցիչների վերապատրաստման հիմնական կառույցի ստեղծմանը, ինչպես նաև սփյուռքահայ 500 ուսանողների հանգիստը հայրենիքում կազմակերպելուն:

Նախարարի խոսքից հետո իրենց երախտագիտությունը և բարեմաղթանքները հայտնեցին ուսուցիչներից մի քանիսը: «Ահա այս է Սփյուռք-Հայրենիք ոսկե շղթան, որ անպառակտելի է»,- ասաց Սիրիայից ուսուցչուհի Երան Ջեյթունյանը: Ապա Վեհափառ Հայրապետը և կրթության նախարարն ուսուցիչներին հանձնեցին հավաստագրեր և շնորհակալագրեր:

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՄԲԱՆԿԱՐ. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

«ԱԼԵՔ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ» ԳԱՆՁԱՏԱՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ
ՄՇԱԿՈՒՅԹԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՅԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՄԱՆԸ

Ուսուցիչները դասընթացներին զուգընթաց պատրաստել էին նաև գեղարվեստական հայտագիր, որով էլ եզրափակվեց հանդիսությունը:

Հավարտ հանդիսության հայրապետական իր օրհնությունը ներկաներին բաշխեց Նորին Սրբությունը՝ ի մասնավորի ասելով. «Այստեղ՝ Մայր Աթոռում մեր հանդիպումների ընթացքում, ուսուցիչներից մեկը հարցրեց. «Վեհափա՜ռ, ինչպե՞ս եկաք այս գաղափարին՝ վերապատրաստման դասընթացները կազմակերպել Մայր Աթոռ Ս. Էջմիածնում»: Առաջին հերթին, բնականաբար, Մեր ցանկությունն էր, որպեսզի ինչպես դարեր շարունակ Ս. Էջմիածինը հովանավորել է և իր գավիթներում կազմակերպել կրթության գործը, դաստիարակության գործը մեր ժողովրդի զավակաց, այնպես էլ այսօր այդ առաքելության մեջ պիտի շարունակի իր ներդրումն ունենալ: Նաև որպեսզի Մենք կարողանանք Մեր գնահատանքն արտահայտել հայ ուսուցչին այն կարևոր ծառայության համար, որ իրականացնում է հայ կյանքից ներս:

Միաժամանակ նաև գիտակցում ենք, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում դուք ավելի պիտի զորանաք, ավելի պիտի ամրանա ձեր մեջ ձեր առաքելության գիտակցությունը, և դուք առավել նախանձախնդրությամբ պիտի իրականացնեք ձեր առաքելությունը, ձեր ծառայությունը հայ մանկան կրթության նվիրական գործի: Եվ վստահ եմ, որ այս մեկ ամսվա ընթացքում կատարվեց այն, ինչ որ Մենք ակնկալում էինք և սպասում: Դուք հաղորդ դարձաք մեր ազգային սրբավայրերին՝ տարբեր ուխտատեղիներ այցելելով, Մայր Աթոռի խորհրդանշանները ըմբռնելով և մեր պատմությանը, մեր անցյալի, մեր ներկայի և գալիքի խորհրդին՝ այս սուրբ մթնոլորտում: Նաև զորացաք հոգով, ձեր լավատեսությամբ դեպի մեր ժողովրդի վաղվա օրը, մեր ժողովրդի կյանքին առնչվելով, մեր ժողովրդի ձեռքբերումներին հաղորդ դառնալով: Կարևոր պարագաներ հայ ուսուցչի համար. ինչպես պիտի կարողանա հայ ուսուցիչը ոգի կերտել հայ մանկան մեջ, եթե այդ երկու նվիրական արժեքներին, այդ երկու նվիրական գաղափարներին չի տիրապետում, չի կրում իր հոգուց ներս, հաղորդ չէ այդ խորհուրդներին, որովհետև կրթության գործում որքան որ կարևոր է հայ մանկանը գիտելիք փոխանցելը, նույնքան և առավել կարևոր է Սփյուռքի հայ մանկանը ոգի հաղորդել, որպեսզի նա Հայրենիքից հեռու ապրի որպես մի մասնիկը հայրենի կյանքի, իսկ նա կարող է այդ հոգով և այդ գիտակցությամբ ապրել և հասակ առնել, Հայրենիքի արժանավոր զավակը լինել, եթե նա հաղորդ է իր պատմությանը, իր անցյալին, իր հոգևոր արժեքներին, իր ժողովրդի կյանքի ու գոյության լուսավոր խորհրդին: Մեր եկեղեցիները գանձարաններն են. ոչ միայն պահպանողները այդ հարստության, այդ արժեքների, այլև հարստացնող ու թրծողը դարերի ընթացքին»:

Խոսքի ավարտին Նորին Սրբությունը մաղթեց ուսուցիչներին Աստծո սիրով, առ Աստված ապավինությամբ շարունակել իրենց ազգօգուտ առաքելությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ